ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28 օգոստոսի 2020թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի և 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. Ֆակուլտետի 2020-21 ուստարվա նախապատրաստական աշխատանքների քննարկում: /զեկ.Մ. Ստեփանյան, Հ. Ասատրյան, Ա.Մարգարյան/
3. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին:/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
4. Արտակարգ դրության պայմաններում ֆակուլտետում նախատեսվող լսարանային և հեռավար կազմակերպվելիք դասընթացների քննարկում: /զեկ. Ա.Շ.Մարգարյան/

<u>ԼՍԵՑԻՆ -</u> Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա սկզբից ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նորացված կազմը, որն ընդգրկում է ֆակուլտետի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական առաջատար կազմին, արտաքին շահակիցների ներկայացուցիչներին, ուսանողական կառույցների ղեկավարներին և որոշ կուրսերի ավագներին: Այնուհետև ներկայացվեց ֆակուլտետի խորհրդի 2020-21թթ. ուստարվա աշխատանքային պլանը և նշվեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի 2017-2021թթ. ռազմավարական և ֆակուլտետի զարգացման պլաններից, որն ընդգրկում է բակալավրի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2020-21թթ. ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի նորացված կազմը և աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան ամբիոնների վարիչներ՝ Հ.Ասատրյանը և Մ. Ստեփանյանը: Նրանք մասնակիցներին ներկայացրեցին 2020-2021 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունները: Զեկուցողները նշեցին, որ դասախոսները սեղմ ժամկետում առարկայական փաթեթները պետք է ներկայացնեն ամբիոն:

Այնուհետև Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց 2020-21 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Նա ներկայացրեց առաջին լուծարքային շրջանի և վերոնշյալ ուսանողների անհատական գրաֆիկները և հանձնարարեց ամբիոնի վարիչներին առանձնահատուկ ուշադրության դարձնել պարտքերի վերահանձնման գործընթացներին:

Խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա I կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և կրթական ծրագրերի: Դասացուցակը կազմվել է „Դիզայն” մասնագիտության I, II, III, IV կուրսերի և „Կիրառական արվեստ„ մասնագիտության I, II կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական բեռնվածության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Ջավրուշյանը, Ան. Չիբուխչյանը, Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար և գործընթացի իրականանացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և կրթական ծրագրերի ղեկավարի վրա:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ստեփանյանը և Ան. Չիբուխչյանը առաջարկեցին անվանական կրթաթոշակի ներկայացնել Մետաքսե Մելյանին, քանի որ ամբողջ տարվա ընթացքում ցուցաբերել է գերացանց առաջադիմություն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու անվանական կրթաթոշակի:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը: Նա նշեց, որ համավարակի պայմաններում առաջացած արտակարգ իրավիճակներում նախատեսվում են դասերը կազմակերպել հիբրիդային եղանակով՝ առավելագույնը երկու օր լսարանում, երեք օր՝ Zoom հարթակով: Զեկուցողը նշեց, որ ամբիոններում իրականացվել են քննարկումներ, և կիսամյակի ընթացքում պարապվելիք առարկաներն արդեն խմբավորվել են: Լսարանում հիմնականում նախատեսվում են իրականացնել գործնական պարապմունքներ, իսկ դասախոսությունները՝ հեռավար: Նա նշեց, որ արդեն իսկ պատրաստ են դասացուցակները: Դրանք այնպես են կազմված, որ ֆակուլտետում միաժամանակ հնարավորինս քիչ թվով կուրսեր լինեն: Ամբիոնի գործավարը նախատեսվող դասընթացների մասին սահմանված ժամանակահատվածում կտեղեկացնի պարապող դասախոսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Արտակարգ իրավիճակների պայմաններում դասերի կազմակերպման գործընթացը գնահատել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.ՄԽԻԹԱՐՅԱՆ